ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՔՆՆԻՉՆԵՐԻՆ ՈՒ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՊՐՈԲԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

08.07.2015 17:50

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում այսօր՝ հուլիս 8-ին, տեղի է ունեցել ‘Աջակցություն պրոբացիոն ծառայության ստեղծմանը’ ծրագրի շրջանակներում տեղեկատվական մարմինների սեմինար փաստաբանների և քննիչների համար:

Բացման խոսքով հանդես է եկել ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը, ով կարևորել է Հայաստանում պրոբացիոն ծառայության ներդրումը: Տեղական փորձագետ, ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը ներկայացրել է պրոբացիոն ծառայության հիմնախնդիրները, հիմնական դրույթները, ինչպես նաև հայեցակարգի հիման վրա մշակված իրավական ակտերի նախագծերը: Արթուր Հովհաննիսյանը խոսել է նաև Հայաստանում պրոբացիայի արդյունավետության մասին, ներկայացրել է ծառայության կառուցվածքը և պրոբացիայի գործողությունը մինչդատական, դատական, պատժի կատարման և հետպատժյա փուլերում:
Խոսվել է նաև անչափահասների նկատմամբ պրակտիկայի առանձնահատկությունների վերաբերյալ: Միջազգային փորձագետ Քրիստոֆեր Ֆրոստը ներկայացրել է դատական համակարգի դերը պրակտիկայի հարցում:
Իսկ մեկ այլ միջազգային փորձագետ Էնդի Բերնհարդտը խոսել է ծառայության գործառույթների վերաբերյալ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })